ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐ**

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

**MINISTER**

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**МИНИСТР**

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 52 10 99
(374 10) 54 08 57

№

«____»____________ 2013թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարության
ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
պարոն Ա.Անդրեասյանին

Հարգելի պարոն Անդրեասյան

Ի պատասխան Ձեր 11.11.2013թ. N 01/06/1960-13 գրության հայտնում եմ, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի լրամշակված նախագծի վերաբերյալ ունի հետևյալ առաջարկություններն ու առարկությունները.

1. Հիմք ընդունելով «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածը և ՀՀ Նախագահի մոտ 06.09 2013թ. կայացած խորհրդակցության ՀՆԱ-7 արձանագրության 2-րդ կետի ա) ենթակետը, նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող՝ Օրենքով հաստատված ծրագրի 6.4-րդ կետի լրացումը նախատեսելիս՝ Սևանա լճից ջրի տարեկան բացթողումների չափաքանակը սահմանելու համար, խստագույնս առաջնորդվել Սևանա լճի ջրային դրական հաշվեկշռի ապահովման սկզբունքով:

Այս առնչությամբ առաջարկում եմ նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող՝ Օրենքով հաստատված ծրագրի 6.4-րդ կետը վերջակետից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Բացթողումների արդյունքում Սևանա լճում բացասական հաշվեկշիռ գրանցելու դեպքում՝ հաջորդ տարվա ջրի բացթողումների չափաքանակների պահանջարկը պետք է սահմանվի նախորդ տարվա ջրառի սահմանված ջրաքանակի նվազեցմամբ՝ դրական հաշվեկշիռն ապահովող ջրի դեֆիցիտի կրկնակի (նախորդ տարվա դրական հաշվեկշիռը վերականգնելու և այդ տարում դրական հաշվեկշիռ ապահովելու համար) չափով:»

2. Մինչև նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը առաջարկում եմ ստանալ գիտությունների ազգային ակադեմիայի գիտական հիմնավորումը և «ՀՀ ԱԻՆ հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության» ՊՈԱԿ-ի պաշտոնական եզրակացությունը:

Հարգանքով՝

Ա.Հարությունյան

Գ.Սարոյան
519184
567437